

Նա վերացական կերպով չէ խօսել՝ յափըշտակուած ու կարուած այս աշխարհից, այլ նորա խօսքի նիւթը եղել են սոսկական ամենօրեայ կեանքի երևոյթները. բարոյական ամենակնճռոտ խնդիրներ պարզաբանել է նա բնութեան ամենապարզ օրինակներով՝ առակներով է խօսել, և վայրի շուշանից սկսած մինչև երրուսազէմի հոյակապ տաճարը՝ ամէն առարկայ իրեն Աստուծոյ նախախնամող գօրութեան պատկեր ընդունելով՝ ցայց տուել թէ ինչպէս պէտք է գործադրուի արարածական բնութեան մէջ Արարչի կամքը. Նա մարդոց վշտին վշտակից, ուրախութեանը ուրախակից է եղել, և այս մեղաւոր աշխարհը ամենամուժ գոյներով նկարագրելով հանդերձ չի կամեցել որ մարդիկ ճգնաւորներ լինեն ու քաշուեն աշխարհից, այլ սովորեցրել է երանութեանց դրախտ դարձնել այն, Աստուծոյ արքայութեան ճանապարհները ճանաչելով և ըստ այնու ընթանալով:



ՀԱՂԲԵԾ և ՍԵՆԻԶԻՆ

Վ. Ա. Ն. Ք Ե Բ Բ

(967—1300).

(Շարունակուրիմ) *

Գ. Լ. ՈՒ Խ Գ.

Սանանի հոշակը եւ վայելած հեղինակութիւնը.

Այսպիսի դիտութեամբ և առաքինի վարքով ձոխացած Սանահննը անշուշտ երկարժամանակ անյայտութեան մէջ մնալ չէր կարող: Այդ այնպիսի մի ժամանակ էր, երբ գիտնական և բանիմաց վարդապետներին մատերի վերայ կարելի էր հաշուել, և աշարեւելքում իրար ետիւ հանդէս դանդարձնելու համար կամ վերջացնելը Տէր Պետրոսը վախճանուած է այդ պատճառով Անանիան իւր երկը նուիրում է նրա յաջորդ Խաչիկ կամուռզիկուին (1054—1060) հետեւալ վերջարանով. Ենոյց արդ՝ տոեալ զարքատ իմոց մտաց ընկալցիս զգտուց ով գերազարդ և ամենիմաստ հանձնարով առցիւլ Տէր Խաչիկ, վերադիտալ Հայոց Մեծաց, փոխանորդ մ. ծի Առաւարչին, թէ ոչ զյաւեւակատարեալն սակայն ըստ կարի մերում զարդարութիւն լիազէս ցուցեալ. յաղագս որոյ աղաշեմ ըստ առքատատուր արոց տառապղելապետ այրուց այնորիկ համարեացին զվարձանութիւն որ ոչ ըստ արցենց այլ միայն հորուստ յօժարութեան ընդ քաջաշատանան գո-

զիանական վարդապետները Այն ինչ Հոյոց մնացած վանքերը իրենց ժամանակին շտու ու քիչ նշանակութիւն ունենալուց և չեղինակութիւն վայելելուց յետոյ այժմ արդէն մթութեան քօղով էին ծածկուել՝ Անահայննը խաւարի մէջ իրեւ մի լուսատու վարոս է երեւան, որ բոլորի ու շքը իրեն վերայ է գարձնում: Ամէն կողմից զալիս են այնահեղ ուսանելու և զիառութեան պաշարով ծանրաբեռնուած յետ գաւնալու և գործերու իրենց աեզերում: Յովհաննէս աբբան կաթողիկոսական աթոռի վրայ բարձելու է հրաւիրում նորա սառաջնարդին, Դևուկորոս արքեպիսկոպոսին: ամենայն Հայոց սրբազնագոյն քահանայապեաները անմիտ ջապարէս Սանահնի գիտնականներին էին զիմում իրենց հրամաններով և խնդիրներով այս կամ այն զիանական աշխատանքն յանձնեալներու կամ մի բան զբելու: Այդպէս՝ յայսնի է, որ Անանիա Սանահննցու Բան հակածառութեան ընդգեմ երկարնակաց երկը գրուած է Տէր Պետրոս Գետաղարձի հրամանաւ այդ երկի վոքքիկ յառաջարանը: որ ուղղուած է յիշեալ Հայրապետին հետեւալուն է, ... Ա՛ Տէր Հովուապետ շնորհօքն առցիւլ երկնացնովք վերատեսուչ Հայատաննեայց և ամենայն աղդաց և աղանց ուղղափառաց: առ որ հրամայեցիք սուզ ինչ տրամարաննեալ ընդգեմ Քաղկեդոնի զորս իրեւ ի հայելուն յայտնի ցուցցուք և ի զրոց սրբոց յաւապելական և ի մարդարէական մատենից և ի սրբոց հողելիր վարդապետաց և նա: Սակայն նախ քան երկիս վերջացնելը Տէր Պետրոսը վախճանուած է, ինուամ և այդ պատճառով Անանիան իւր երկը նուիրում է նրա յաջորդ Խաչիկ կամուռզիկուին (1054—1060) հետեւալ վերջարանով. Ենոյց արդ՝ տոեալ զարքատ իմոց մտաց ընկալցիս զգտուց ով գերազարդ և ամենիմաստ հանձնարով առցիւլ Տէր Խաչիկ, վերադիտալ Հայոց Մեծաց, փոխանորդ մ. ծի Առաւարչին, թէ ոչ զյաւեւակատարեալն սակայն ըստ կարի մերում զարդարութիւն լիազէս ցուցեալ. յաղագս որոյ աղաշեմ ըստ առքատատուր արոց տառապղելապետ այրուց այնորիկ համարեացին համարեացին զվարձանութիւն որ ոչ ըստ արցենց այլ միայն հորուստ յօժարութեան ընդ քաջաշատանան գո-

* Տես. Արարատ 1901 թ. հմ. Ե. էւ 2.

վիզաւ յամենեցունց Տեսանեն։ Ըստ այնու և
մեր ընկալիքիս զակաւ տուրս երկուց լումայիցզ ։
Նև եթէ սխարանը մնչ իշեն ի բանիդ ըստ
տկար և հօսանուած բնութեանս մերոյ, ուղ-
ղեաջիք սիրով հօգուոյն և կորովահանձար ի-
մասմիք լցի պակասն և սիրալիքն ծած-
կոցի ըստ զրոյն եթէ սեր ծածկէ զբաղմու-
թիւն յանցանաց ելնու ննչալէս յայտնի
է, Պօլոսի չորեքտասանն թշթոց մեմնութիւնն
էլ Անանիս Սանահնեցին զրել է Գետադարձ
հայրապետի հրամանով։

Գետրոս Դետադարձ հայրապետը նաև
տեղ գնալիս՝ այդ վանքերից էր ուղեկիցներ
առնում իւր հետ. այլպէս օրինակ՝ Մաս-
թէս Աւահայեցու վկայութեամբ նորա հետ
կ, Պօլիս են գնում Վարդան Սանահնեցի և
Մատթէս Հազբասցի վարդապետները։

Սանահնի միարաններն այնպիսի հեղինա-
կութիւն են վայեկում, որ մինչև անզամ ժա-
մանակի ամենանշանաւոր զիանականներից մէ-
կը՝ Գրիգոր Մագիստրոսը, իւր հեռու զգեա-
կից սկսում է զբաւոր յարաքերութեան մէջ
մանել նոցա հետ ընծայ ուղարկել նոցա և
մշտ հազորդակցութիւն պահպանել։

Այս բոլոր տեղեկութիւնները ստանում
ննք Գրիգոր Մագիստրոսի մի թշթմից, Սանահն-
ի միարաններին զրած։ Այդ թուղթը շատ
կարեռ կետեր է բովանդակում Սանահնի
միարանների կեանքի և գործունեութեան մա-
սին, ուստի և հարկ եմ՝ համարում քա-
ղաքածօրեն զնել այսաեղ, վերցնելով Մայր
Աթոռի № 222 (Դէորդեան) ձեռապրից։

«Գրիգոր Մագիստրոսի պատասխանի ողբ-
րազան եղարցն սուրբ ուխտին Անահնի, որ
զրեալ էն թուղթ օրհնուի եան ի Միջա-
գետու և մեղադարձական սակա ոչ զրելոյ թուղթ
առ նոսա» «Զօրբրազանց և զ' ի մարմնի ան-
մարմնոցն և անմանիցն հանդիսակցելոցն մի-
եղինարար կցորդութեամբ և յարաւեական
արտահնառութեամբ, մշտաշարժ ի գերակա-
տարն խաղակցութեամբ վկայից և մայրա-
քաղաքական բարեկարգութեամբ ի միամին
ընկալիք, իմաստուց բնլոր աշնեստից և նույ-
նունելոց պարագանելուց և յաստածակութեամբ
միանել անդաշուշանութեամբ, անընդունակ ան-
դաշուշանութեամբ, անընդունակ անդաշու-

սուս գլուխն շարամանելոց և յարամանու-
թեամբ յօդելոց և, եթէ պարա և ասել՝ հայց
մերոց և եղբարց, քանզի ի միոջէ յորովայնէ
աստուածայնուոյ զիտէ, զմեզ բանս վերստին
ծնանել։ Ընկալայ զզիր, կամ իրբու պարտ
էր արտալածելոյ և տարապիր եղելոյ եղոր
տեսանել զզիրս կամ զամանս ի նոցանէ՝ այս-
պէս ի վերայ իմայ եղեալ զաս հայրանի ար-
տօսր և կական ոչ սակաւ հուեցուցանէի, ար-
տասորեալ իրբու ի վտակաց ազքիրց, ի ստորա-
կացեալ երախանաց, որ և յերկիր ծովացեալ
ծորմանն ծառ ալիր շիմաւ, ձեւելով զնայրական
ծերոց ծայրու շունչէց ինսանս առ մեռ և իրուս և
ուղրանունեամբ բուրեւաբունիւն և ուշեւտասար-
դաց և որք է վարժարականն հուկապրականն և երա-
ժարականն անցայ զմբառ ածեւալ հանդիւն և
վրասուն և զիւելոյնի հուս-նիւնան զմանկանց սաղ-
նուելունիւն առաջարայնունիւնուն վերատեցւու-
որ զրեթէ պետութեանց և բոլոր երկնային
դասու և զօրութեանց գերակատար զտեալը
և ումանց զանազան և պէսպէս առաքինու-
թեամբ և զգնութեամբ սքանչելիի և զարմա-
նայի երեեալ (Նկարազբում է Սանահն-
ի միարանների խիստ ճգնողական համբերա-
տարց հեղ ու խոնարհ կեանքը սրի համբաւը
ամեն կողմ տարածուել է) իսկ զի՞նչ տ-
րուեաս և կարգաւորութիւն հայրածայտիւն
ուղղագիտառ վարդապետութիւն ի զիշերի և ի
տուընջեան, և այն ոչ սուտ կամ մնուի պատիր
և Սատիկեցի առասպեկտը այլ աստուածեղին
արգեամբը և զօրութեամբ և քաղցրաձայնու-
թեամբ երաժշտականաց, և նուագումն սաղմու-
սելոյ և ընթերցումն հարցն վարուց և հակառ
կել զզեղեցիկ հակոռափութիւնս և զմիմեամբը
ելանել, և մերոյ ձրագի և կայծական սովասեալը,
յամենայնինեղեալը և կարօնեալը և յերեկու-
րեայ և յառաւօտէ առ հովիւն և առաջնորդն
իւրեանց ընթացեալք ծմարիտ դաւ անու-
թեամբ երրորդութեան խոսանվանութեամբ, և
եթէ, այլ բնչ շնչական մտածութիւնս ի նոսա
կրեալ, առաջի արկանել ոչ զանդազին, վասն
որոյ զօրութեամբն Աստուծոյ ոչ հիւսնդա-
ցեալք, այլ քաջութեամբ իրբոյ պահն է նորմ-
նէ բնլոր Արամեան բարեալք, հանդերձ աս-
տուածպետականից, նմանեալք ծայրացելց
առաջնորդի ձերոյ Այլ զի զրեալ էր ձեր,

թէ յորժամ կամեցար ի կենցազյս հրաժարէլ ի բաղրամ թարգումեանս վիճակի զմեզ գտնալ քո հանգիստ և ապահով, այս արդար և յիշաւի և ոչ սխմար կամ անդիտարար: Այս նէ առաջ առաջ ստորագումաբար շուրջ հայեցի, նույն ենիւ ու այլ ստորագում է ամենենին չմոռանալ նոցա: Նամակից երեսում է, որ նրա հօր մահուան առթիւ Անահաջնեցիք միսիթարական նամակ են զրել: Յանկութիւն է յայանում Սանահնին ընծաներ ուղարկել սակայն վախենում է, թէ տեղ չհասնի և առպատակների ձեռքն ընկնի որից ոչ ինքը օգուտ կունենայ և ոչ էլ Սանահնեցիք: Ապա աւելացնում է, Նթէ, ծշմարիտ սէր և կատարեալ առ ձեզ ունիք, սրբոյ խաչն ի մեզ մարդ եկեսցէ և մեք զինի նորա մինչեւ ի Մարմաշէն առաքեմք. այլ ի սուրբ և ի խորհրդական արօմու ձեր մի՛ մոռանայք վասն սիրոյն Քրիստոսի: . . . :

Այսպիսով Գրիգոր Մագիստրոսի նման ականաւոր ամենաւորութիւնը Սանահնի միաբաններին իրեն հայր և խրառող է անուանում, բոլոր արուեստից և մակացութեանց մէջ իմաստուն, ամբողջ Արամեան սեռի մէջ ակունք, և ամենալաւ աեզում կեանքից հեռացոյի և Աստծուն նուրիուողի համար: Յիշաւի Գրիգոր Մագիստրոսի այս նշանաւոր թուղթը Սանահնի վանքի հուչակի և հեղինակութեան ամենափառաւոր յայտարարն է:

Զմուանանք յիշել որ նոյն Գրիգոր Մագիստրոսը շատ թղթեր ունի զրած նաև Անանիա Սանահնեցուն զանազան խնդիրների համար. ժամանակի երկու նշանաւոր գիտնականները՝ մաերիմ յարաբերութիւն ունեին և շարունակ նամակարերները գնում և զայխ էին միմեանց մօտ:

Դ Լ Ո Ւ Խ Պ.

Հաղբատի դպրոց եւ Յովհաննէս սարկաւագ—վարդապետ.

Մինչ այս մինչ այն Սանահնի մօտ զըտնուած Հաղբատի վանքն էլ սկսեց ծաղիել և խր պատղները տալ: Անշուշտ Հաղբատի արագ յառաջ գնալուն մեծապէս նպաստեց Սա-

նահներ. Սանահնի աղղեցութեամբ այսուղի կազմուեց մի զպրոց որի ուսուցիչներն ու առները շարունակեցին և աւելի ևս կասարել լութեան հասցրին Սանահնում սկսուածը:

Հաղբատի դպրոցի մասին նախ քան հովհաննէս սարկաւագ վարդապետը տեղեկութիւն չունինք: Թէ, և նրանից առաջ էլ գոյութիւն ուներ վանքը բայց որովհաննէ խկապէս գործոց եղաւ Յովհաննէս սարկաւագ—վրդապետ միջոցով ուսափ նրան ևս պէտք է համարենք Գալքեվանքի հիմնադիրը Ժիկի գարու Բ. կիսին:

Յովհաննէս սարկաւագ վարդապետը Արցախի Փառխոս զիւղից էր, ծնուած մի, գարու կիսին: Քահանայական ընտանիքից լինելով՝ հայրը հետամուտ էր եղել նորանաւ կրթութիւն տալու, ուսափ և ուղարկել էր ժամանակի զիտութեան կեղբաները: Սանահնին և Հաղբատի կրթուելու և ուսում ստանալու համար: Այսաեղ սարկաւագ վարդապետը աշխատում է «Զօր ամենայն և զզիշերն բովանդակ՝ առ իմաստա ցանգութեամբ, նաև սիրով» որ առ հանձար» (Երգ օսթիկի): Ինքն խր մասին վկայում է նոյն երգի մէջ. «Ի նախնեաց բարեպաշտից և յիմաստուն

ծնուած բուսեալ:

Որք մնուցին զիս օրինօք հոգւոյն կենաց Առներ քան ըստ բնութեան տածիւք ինաման յառ մանկունա:

Որովք յառաջնումն հաստիս դաստիարակեալ, յոյս տայի քաջութեան: Իւր անկոնջ աշխատավիրութեամբ նա ընդարձակ հմտութիւններ է ձեռք բերում, և պատմական բնական տօմարական առտուածաբանական զիտութիւնների վերաբերեալ մի շաբք այսպիսի հեղինակութիւններ է թողել, որ կարող են նորա անուանը պատիւթերել: Կիրակոս Գանձակեցի Պատմէը նորա բազմաթիւ հմտութիւնները գովելով տառմ է. «Մեծիմաստն զիտութեամբ քան զըոլովս և զհանձարեղն յամենայնի՝ մտահարուսոն Յովհաննէս սարկաւագն և ստուածանին և ոչ զեղծուկ» (Գանձ. 1858,

63—65): Նորա ուսումնասիրութեան մասին հրաշքներ են պատմում: Յօր 3 զիշեր նըստած Հաղբատի մատենադարանում՝ մի քարայրում, նա իւր սիրելի գրքերն է կարգում մի անկիւն քաշուած, զուռը նորա վիշբայ փախում են և 3 օրից յեայց երբ նորից բաց են անուում, տեսնում են նորան իւր գրքերն առաջը ուսումնասիրելիս. իսկ երբ զարմացած հարցնում են, թէ այդքան ժամանակ ի՞նչպէս է, որ քաղցած մնացել է, նա պատմուան է տալիս, ցոյց տալով իւր գրքերը. Այդ է իմ կերակուր և ըմպելի, զոր կերայ և արքի զաւուրս զայսոսիկ: Նոյնպիսի հրաշքներ են պատմում նաև նորա սուրբ կենցաղի մասին, բաւական է յիշել Կիրակոս Գանձակ վեցու պատմած Զոմզոմայի դէպքը և Վարդանի պատմած ո. Ստեփաննոսին տեսութեան գնալն ու նորա հետ համբուրուելը: Զարմանալի չպիտի թուի ուրեմն, որ այսպիսի իմաստութիւն սիրող և սուրբ մարդու համար ժամանակակիցները և հետագաները այնպիս գովեստով են խօսում՝ անուանում են նորան սուրբ իմաստասէր, մէջ իմաստասէր, աստուածային իմաստասէր, դերունակ վարդապետ, մէջ սովեստէս:

Թէ Յովհաննէս սարկաւագ վարդապետը հետեւ է յատկապէս ճարտասանական և քերթողական արուեստներին, երեսում է նորա սարեկի երգ: ի՞նչ հետեւ տողերից.

Որով յաղթեալ մեզ իմաստնոց և կարծեցեալ բանաստեղծիցս....

Ասոտ զաս նստիլ մերձ առ ինեւ, իբր առ ըուեստիւ ինձ յանգակից, Բաղմաղեան երգարանաւ եղանակես և կաքաւես:

*Հոմերական տաղիցն չափ քեւ ծանուց յեալ լինի բազմաց,

Յոտանաւոր և ցուցական ըստ քերթուղացն տեսակի

«Կամ թէ ևս առաւելագոյն, որպէս թուի ինձ զիտողիս»: (Բազմավիւու 1847, 221—225):

Նորա անունով մնացել են մեզ հետեւալ հեղինակութիւնները.

“) Ներբող կուսաւորչի (տպուած Սովիերի մէջ).

- է) Արբոյն Սահակայ և Մեսրովբայ.
- գ) Մեծին Ներսիսի.
- շ) Տրդատայ.
- է) Ղեղնդեանց.
- Այս վերջին 4 ներբողները այժմ մերձեռքը հասած չեն, ուստի և ոչինչ ասել չենք կարող նոցա մասին:
- շ) Վասն մասանց պատուոյ և պատկերաց ընդունելութեան.
- է) Վասն շարժման երկրի.
- Ռ Մեկնութիւն տօմարի և յաղագս անկիւնաւոր թուոց.
- Դ) Բան խրատու առ ուսումնասէրս.
- ժ) Ղեղնդեանց «Պայծառացան այսօր» շարականը.
- ժա) Ճառ իսուրը Հողին. (իւրաշակերտ կունդ Արգսի վկայութեամբ).
- ժէ) Երդ սարեկի, որից հատուածներ մէջ քերինք.
- ժէ) Տաղ ի յարութիւնն Քըիստոսի.
- ժդ) Յաղագս ամսոց Հայոց և տօնից չորեքտասաններորդ լուսնոյ զատկաց.
- ժէ) Յովհաննու իմաստասիրի, որ մականուանի սարկաւագ ասացեալ, յառաջ քան զյրութիւն իւրոյ տումարին.
- ժը) Տօմար ժամանակաց և թուականաց.
- ժէ) Բան յաղագս Շ—Եկաց.
- ժը) Հարցումն վարդապետաց առ Սարկաւագ.
- ժը) Յաղագս չորից առաքինութեանց.
- է) Բանք ընդդէմ այնոցիկ, որք վասն բաւակին մոլին.
- էա) Յեկեղեցական պատմութենէ, զոր երկրորդ կեալ է սարկաւագ վարդապետի.
- էէ) Հարցմունք Վրաց եպիսկոպոսի ի Հայոց վարդապետէ Սարկաւագին, գեր գոլով յազգս ամենայն, թէ զիազդ ունի երգ սաղմոսին ասացեալ. «Իու խորտակեցիր զգուխ վիշապանց ի վերայ Զուրց. դու փշրեցեր զգուխ».
- էէ) Յովհաննու քահանայի յաղագս նշանակութեան հաւատույն նիկիական.
- էէ) Նորին Յովհաննու քահանայի ի ինդրոյ Գագկայ կրօնաւորի յաղագս քաղկերունականացն:
- Այս զրուածքը, որ նորա ամենից նշանաւոր վիճարանական գրուածքն է, շատ տեղ

քանը միայն գիտենք, որ Հաղբասայ Մեծ Սովետակար ՇՀԲ (578+551=1129) թուին փախճանուեցաւ, ինչպէս վկայում են Կիրակոս և Սամուել Անեցի պատմիչները և թաղուեցաւ «Յարեկելց կուսէ մեծի եկեղեցւոյն առ գուրս փոքրագոյն եկեղեցւոյն» զոր յետոյ քակեայ եպիսկոպոսն Համազասպ և շինեաց հրաշալի շինուած, ուր զգանգակոն կախէին, յարմարեալ ի նմին և եկեղեցիս, առումէ Կիրակոս (65):

Նորա առազանի վիրայ մինչեւ օրս էլ առնելով մուռմ է հետեւեալ արձանագրութիւնը. և երձանս այս սեմական է Սովետառու սարկաւագին:

Յովհաննէս սարկաւագ վարդապետը Հաղբատի կրօնական - գիտանկան դպրոցի հիմնադիրը լինելով հանդիքն, նորա ամենանշանաւոր ուսուցիչն է ու ներկայացուցիչը, և անշուշտ բազմաթիւ պիտանի և բանիմաց մարդիկ է առուել իւր ժամանակալիցներին, որուցից սակայն մի քանիսի անունները միայն յայտնի են մեղ այժմ, իսկ ոմանց գրուածքները մինչեւ այժմ էլ անյայտութեան մէջ են մնում:

Այդպէս օրինակ յայտնի է մեղ մասնակիցներից, որ Յովհաննէս սարկաւագ վարդապետի աշակերաններն են եղել ամենից առաջ՝ Սամուել Անեցի ժամանակադիր պատմիչը, որ շատ կարեւոր տեղեկութիւններ է հաղորդում մեղ իւր ուսուցիչ մասին.

Է) Մի անգամ արդէն յիշուած կունդ Սար զիս վարդապետը, որ զրել է Յովհաննու և Պուկառու աւետարանների մեկնութիւնը, օգտուելով ի միջի այլոց նաև իւր վարդապետի զրուածքներից:

Դ) Երեմիա Անձրեիկ կոչուած, որից միայն այսքան է յայտնի թէ, մի անգամ Սարկաւագ վարդապետը հրամայել է նորան լուռ կինալ և նա երեք տարի շարունակ ոչ որի հետ չէ խօսել:

Յիշուած են նաև երեք այլ տշակերտներ որոնց գործունելութեան և երկերի մասմին եթէ, ունեցել են, ոչ մի աեղեկութիւն չունինք. այդ Յ հոգին են՝ Խաչատուր, Գրիգոր և Յովհաննէս Անեցիք:

Կը շարունակում:

Եր. ս.

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.

Ո. ՈՒ. Ա. ԵԿԵՂԵՑԻ

Փետրուար ամսում Մուսաց ս. Սինօդի արձակած վճիրը, որով աշխարհահռչակ Լէզ Ցոլստյ բանագրուում էր իրեւ գաւաճան մայրենի եկեղեցւոյ՝ զբաղեցնում է մինչև այժմ թէ պրտասահմանեան և թէ ուսւաց մամուլը Շերք. ԵՎԾՏԱԿԵ 27 հունվարի ս. Սինօդին ուղած պատասխանը մէջ բերելով՝ տալիս է մի քանի յօդաւածներ բարձրաստիճան ուսւա եկեղեցականների գրչից, իրեւ հերքումն և բացայատութիւն նորա ասածների Ա. Ա. թէ ուղարկում մասնակառ աշխատական նշանակութիւն ունեցող սկզբունքներ գնում: Հակառակորդները ըստ մէջի մասին բառերի հետ են խաղում: առանց հաշիւ տալու իրենց թէ արդեօք այն որ իրեւ եկեղեցւոյ ծշմարիտ գաւանութիւն բարձրահնչիւն արտայատութիւններով պաշտպանում են իրենց հոգւոյ մէջ ևս ծշմարտութիւնն է, կշռագատել և զգացնել են խորապէս նորա բուն արժէքը Հարկաւ Տոլստյի կարծիքները քրիստոնէութեան մասին ոչ մի դաւանութեան հետ չեն հաշտուում և մասնաւորապէս օրմողոքս եկեղեցին տանել չէ կարող նորա կողմից իւր զէմ եղած յարձակումները, բայց նա իրաւամբ նկատում է, որ այդպիսի և գորանից շատ աւելի խիստ հայեացք ունեցել են ուսւացողների և կրթուած դասի մեծագոյն մասը. արբերութիւնն այն է, որ ոչ ոք նորա չափ լրջօրէն չի զբաղուել կրօնական - բարյական խընդիրներով և նորա պէս նորը թափանցել հոգեւոր կեանքին վերաբերեալ հիմնական ծշմարտութիւնների մէջ, Յամենայն գէպս ոչ ոք կասկածել չի կարող: որ նա ամրող կեանքում ծշմարտութիւն է որոնել և կատարեալ անկեղծութեամբ է ասում իւր պատասխանի մէջ, թէ ծշմարտութիւնը իւր համար քրիստոնէութիւնն է, ինչպէս ինքն է հականում, և եթէ մէկը համոզէր, որ սխալուում է, և աւելի պարզ՝ նորա մաքրին ու սրտին աւելի բաւականութիւն տուող հաւատոյ ծշմարտութիւն զնէր նորա առաջ: այն կընդունէր, որովհետեւ Աստուծուն, բացի ծշմարտութիւնից, ոչնչ պէտք չէ: Աւստի խիստ ցաւալի և անախորժ է մի քանի հակառակորդների վարմունքը, որոնք աշխատում են կասկածաւոր զարձնել նաև նորա արգարամու-